

4.06.2025թ.
N 032510



ԱՆԿԱՆ ԱՌԻԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՅՈՒՆԻԲՈՄՓ» ՓԲԸ մասնակցին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «ՅՈՒՆԻԲՈՄՓ» ՓԲԸ (Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով՝ կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Ընկերության՝ 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված «Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի» (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները էթիկայի նշված պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՄ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին վերահսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Հնկերության՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Հնկերության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Հնկերությունը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Հնկերության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամոռի են կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազմեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:


Որպես ԱՄՄ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Ի վրումն՝

- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին վերահսկողության չարաշահում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին վերահսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Հնկերության ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:

- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:

- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին վերահսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:



Մեդրակ Բադայան

Աուդիտոր

4 հունիսի 2025թ.

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ

		2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
	Ծանոթ.		
ԱԿՏԻՎՆԵՐ			
<i>Ոչ ընթացիկ ակտիվներ</i>			
Հիմնական միջոցներ	4	95,699	82,588
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	5	154,564	190,445
Ոչ նյութական ակտիվներ		765	775
Հետաձգված հարկային ակտիվներ	6	14,546	21,370
		<u>265,574</u>	<u>295,178</u>
<i>Ընթացիկ ակտիվներ</i>			
Պաշարներ	7	401,378	441,521
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	8	1,172,560	133,261
Տրված փոխառություններ	9	28,449	32,011
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	10	312,681	629,685
		<u>1,915,068</u>	<u>1,236,478</u>
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		<u>2,180,642</u>	<u>1,531,656</u>
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
<i>Կապիտալ և պահուստներ</i>			
Բաժնետիրական կապիտալ	11	70,100	50,100
Կուտակված շահույթ		429,324	458,409
		<u>499,424</u>	<u>508,509</u>
<i>Ոչ ընթացիկ պարտավորություններ</i>			
Վարկեր և փոխառություններ	12	-	94,168
Վարձակալության գծով պարտավորություն	13	137,114	178,861
		<u>137,114</u>	<u>273,029</u>
<i>Ընթացիկ պարտավորություններ</i>			
Վարկեր և փոխառություններ	12	53,193	-
Վարձակալության գծով պարտավորություն	13	38,876	32,382
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	14	1,359,881	637,435
Շահութահարկի գծով պարտավորություն		92,154	80,301
		<u>1,544,104</u>	<u>750,118</u>
ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		<u>2,180,642</u>	<u>1,531,656</u>

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2025թ. հունիսի 4-ին:

Արմեն Բալդրյան

Գործադիր տնօրեն

Լուսինե Զախարյան

Գլխ. հաշվապահ

1-28 ՕԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱԶՄՈՒՄ ԵՆ ՍՈՒՐԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՔԱԺԱՆԵԼԻ ՄԱՍԸ

ՇԱՀՈՒՅԹԻ ԿԱՄ ՎՆԱՍԻ ԵՎ ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ		2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
	Ծանոթ.		
Հասույթ	15	3,067,102	3,186,829
Վաճառքի ինքնարժեք	16	(2,095,136)	(2,319,403)
Համախառն շահույթ		971,966	867,426
Այլ եկամուտ		18,365	66,715
Իրացման ծախսեր	17	(142,621)	(103,770)
Վարչական ծախսեր	18	(286,212)	(209,243)
Այլ ծախսեր		(22,515)	(23,970)
Գործառնական գործունեությունից շահույթ		538,983	597,158
Ֆինանսական եկամուտ/(ծախսեր), գուտ	19	(36,440)	(46,637)
Փոխարժեքային տարբերությունից օգուտ/(վնաս)	20	(32,650)	(6,567)
Շահույթ մինչև հարկերը		469,893	543,954
Շահութահարկի գծով ծախս	21	(98,978)	(93,050)
Տարվա շահույթ		370,915	450,904
<i>Այլ համապարփակ ֆինանսական արդյունք</i>			
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք հարկումից հետո		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		370,915	450,904

1-28 ԾԱՆՈթԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳԱՋՄՈՒՄ ԵՆ ՍՈՒՅՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆԲԱԺԱՆԵԼԻ
ՄԱՍԸ

ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ	Կանոնադրական կապիտալ	Կուտակված շահույթ	Ընդամենը
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	50,100	207,505	257,605
Տարվա շահույթ	-	450,904	450,904
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-
<i>Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք</i>	-	450,904	450,904
Շահաբաժիններ	-	(200,000)	(200,000)
<i>Գործարքներ սեփականատերերի հետ</i>	-	(200,000)	(200,000)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	50,100	458,409	508,509
Տարվա շահույթ	-	370,915	370,915
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-
<i>Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք</i>	-	370,915	370,915
Թողարկված կանոնադրական կապիտալ	20,000	-	20,000
Շահաբաժիններ	-	(400,000)	(400,000)
<i>Գործարքներ սեփականատերերի հետ</i>	20,000	(400,000)	(380,000)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	70,100	429,324	499,424

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ

	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
<i>Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր</i>		
Տարվա արդյունք	370,915	450,904
<i>Ճշգրտումներ</i>		
Մաշվածություն և ամորտիզացիա	52,423	52,373
Դեբիտորական պարտքերի պահուստ	9,267	(21,455)
Շնորհներից եկամուտ	-	(9,914)
Ֆինանսական ծախս	36,440	51,862
Շահութահարկի գծով ծախս	98,978	93,050
Փոխարժեքային տարբերությունից օգուտ	32,650	6,567
Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր մինչև շրջանառու կապիտալի փոփոխությունները	600,673	623,387
<i>Փոփոխություններ</i>		
Պաշարներում	40,143	(122,730)
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերում	(1,053,468)	(9,945)
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերում	687,193	(132,993)
Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր	274,541	357,719
Վճարված տոկոս	(15,321)	(25,513)
Վճարված շահութահարկ	(87,125)	(61,430)
Գործառնական գործունեությունից զուտ դրամական հոսքեր	172,095	270,776
<i>Ներդրումային գործունեությունից դրամական հոսքեր</i>		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(29,643)	(3,268)
Փոխառությունների մարում/(տրամադրում), զուտ	-	190,495
Ներդրումային գործունեությունից ստացված/(գործունեության համար օգտագործված) զուտ դրամական հոսքեր	(29,643)	187,227
Ֆինանսական գործունեությունից դրամական հոսքեր		
Ստացված վարկեր, զուտ	(40,975)	(79,891)
Շահաբաժինների վճարում	(400,000)	(200,000)
Ֆինանսական գործունեության համար օգտագործված զուտ դրամական հոսքեր	(440,975)	(279,891)
<i>Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)</i>	(298,523)	178,112
Փոխարժեքային տարբերությունների ազդեցությունը դրամական միջոցների վրա	(18,481)	(7,362)
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբին	629,685	458,935
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեվերջին	312,681	629,685